ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-ԻՑ 23-Ը ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

   Սուրեն Պապիկյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն/2020թ. սեպտեմբերի 21-23-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն/այսուհետ՝ ԱԷՄԳ/

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**

   Մասնակցել ԱԷՄԳ 64-րդ գլխավոր համաժողովի հերթական նստաշրջանին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Համաժողովի ընթացքում քննարկվել են ԱԷՄԳ-ի 2019թ. հաշվետվությունը, միջուկային անվտանգության 2020թ. զեկույցը, միջուկային և ճառագայթային անվտանգությանը վերաբերող հարցեր, COVID-19-ով պայմանավորված ԱԷՄԳ գործունեության առանձնահատկությունները և կազմակերպության կողմից COVID-19-ի հետ կապված իրականացվող ծրագրերը: Քննարկվել են համաժողովի օրակարգով նախատեսված այլ հարցեր:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Համաժողովի շրջանակներում հանդես եմ եկել ելույթով:
   Հանդիպում է կայացել ԱԷՄԳ գլխավոր տնօրեն Ռաֆայել Մարիանո Գրոսսիի հետ: Կարևորվել է Հայաստանի Հանրապետության և ԱԷՄԳ-ի համագործակցության հետագա զարգացումը: Քննարկվել է Հայկական ԱԷԿ-ի նախագծային շահագործման ժամկետի երկարացման ծրագրի ընթացքը: Մտահոգությունս եմ հայտնել Հայկական ԱԷԿ-ի նկատմամբ Ադրբեջանի կողմից հնչեցված սպառնալիքի վերաբերյալ:
   Անդրադարձ է կատարվել ԱԷՄԳ-ի կողմից մշակվող «ԶՈԴԻԱԿ» ծրագրին, որի նպատակն է ամբողջ աշխարհում վետերինար լաբորատորիաների ստեղծման, վերազինման և միջուկային տեխնոլոգիաների կիրառման միջոցով մարդկանց շրջանում կենդանական ծագման վիրուսների տարածման վերահսկումն ու կանխարգելումը: Բարձր է գնահատվել նաև ԱԷՄԳ աջակցությունը՝ COVID-19 համավարակի դեմ պայքարում՝ RT-PCR սարքի և լրացուցիչ սարքավորումների տրամադրման միջոցով:

Հանդիպում է կայացել ԱԷՄԳ գլխավոր տնօրենի տեղակալ Խուան Կառլոս Լենտիխոյի հետ: Քննարկվել է ԱԷՄԳ-ի կողմից Հայկական ԱԷԿ-ի ֆիզիկական պաշտպանության և անվտանգության բարձրացմանն ուղղված ծրագրերը:

Անդրադարձ է կատարվել ԱԷՄԳ-ի կողմից Հայաստան տարբեր առաքելությունների արդյունքներին: Իմ կողմից առաջարկվել է ավելացնել ԱԷՄԳ-ի կողմից Հայկական ԱԷԿ-ի անվտանգության բարձրացման ուղղված աջակցության ծրագրերը:

Հանդիպում է կայացել ԱԷՄԳ գլխավոր տնօրենի տեղակալ Դաժու Յանգի հետ: Քննարկվել է Հայկական ԱԷԿ-ի նախագծային շահագործման ժամկետի երկարացման ծրագրի ընթացքը: Գոհունակությունս եմ հայտնել ԱԷՄԳ-ի կողմից Հայաստանին ցուցաբերվող տեխնիկական աջակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի ընթացքից: Անդրադարձ է կատարվել ԱԷՄԳ-ի աջակցությամբ կադրերի վերապատրաստման հետ կապված հարցերին:

Հանդիպում է կայացել «Ռոսատոմ» պետական կորպորացիայի գլխավոր տնօրեն Ալեքսեյ Լիխաչյովի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայկական ԱԷԿ-ի նախագծային շահագործման ծրագրի ընթացքին վերաբերող հարցեր: Անդրադարձ է կատարվել ՀՀ կառավարության որոշմամբ պետական բյուջեից ներգրավված միջոցներով Հայկական ԱԷԿ-ի արդիականացման նպատակով դեռևս մնացած աշխատանքների իրականացման հարցերին: Իմ կողմից նշվել է «Ռուսատոմ Սերվիս» ընկերության հետ կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսվող միջոցառումները սահմանված ժամանակցույցին ավարտելու հարցը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ԱԷՄԳ–ում տեղի ունեցած հանդիպումների արդյունքներով ԱԷՄԳ-ի տեխնիկական աջակցության, ֆիզիկական պաշտպանության և անվտանգության ուղղություններով առաջարկներ կմշակվեն համապատասխան ծրագրեր իրականացնելու նպատակով:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակել համագործակցությունը ԱԷՄԳ-ի հետ:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.

_____ 25/09/2020թ.